Հետազոտականաշխատանք

Տիտղոսաթերթ (1 էջ)

Կազմակերպությանտվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցայինդպրոց» կրթականհիմնադրամ ՎահրամՍողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտությանթեմա/վերնագիր • Հետազոտությանթեմա	«Հովհ. Թումանյան» թեմայի ուսուցումը 8-՝-րդ դասարանում նախագծային մեթոդաբանությամբ»
Ուսուցչիտվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ.հասցե • Դասավանդվողառարկաներ • Դասարաններ	Մելիքյան Ծուշան Հայոց լեզու, գրականություն Հայոց լեզու, գրականություն 5-9-րդ դասարաններ
Ուսումնականհաստատությանտվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Web կայքիհասցե	«ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ,ք. Բյուրեղավան, Ս.Վարդանյան 2 022265440 byureghavan2@schools.am

Բովանդակություն (1 էջ)

«Հովի. Թումանյան» թեմայի ուսուցումը 8-՝-րդ դասարանում նախագծային մեթոդաբանությամբ»

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

1.1 Նախագծային ուսուցման հիմնական դրույթները.....6

1.2 «Հովի. Թումանյան» թեմայի կրթադաստիարակչական նշանակությունը միջին դպրոցում.....11

1.3 Նախագծային աշխատանք՝ «Հովի. Թումանյան» թեմայի ուսուցման շրջանակներում.....20

Եզրակացություններ և առաջարկություններ.....22

Օգտագործված գրականության ցանկ.....24

Հավելվածներ.....25

Ներածություն (1-ից 2 էջ)

Նպատակը եւ հետազոտական հարցը	**Նպատակ**- ուսումնասիրել նախագծային մեթոդաբանության

	հիմնական դրույթները, դրա ազդեցությունը սովորողների մոտ մի շարք կարողունակությունների ձևավորման վրա, ինչպես նաև դասի օրինակով ցույց տալ նախագծային աշխատանքից ակնկալվող վերջնարդյունքներն ու դրանց հասնելու ուղիները: **Հարց**- Ի՞նչ առավելություն ունի նախագծային ուսուցումը և ինչպիսի՞ ազդեցություն կարող է ունենալ սովորողների մոտ մի շարք կարողունակությունների զարգացման գործում: **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** Ինչպես հայտնի է, հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է: Այսինքն՝ նրանց համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Արդի կրթական բարեփոխումները էլ ավելի բարձր պահանջներ են առաջադրում

	սովորողների մտավոր, հոգևոր և կյանքի համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների տիրապետման նկատմամբ, ինչպես նաև կարողունակ ուսուցիչներ ունենալու առումով: Ուսումնական առարկայի համար սահմանված կրթական չափորոշչային վերջնարդյունքին հասնելու համար բավականին արդյնավետ է նախագծային մեթոդի կիրառումը դասին: Նախագծային մեթոդը կրթական մեթոդների ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Արդյունքը՝ տեսանելի, ներկայանալի, հրապարակված աշխատանքն է: ՀՀ կրթական համակարգում այս մեթոդը նորություն է, մինչդեռ նման ուսուցման տեսակն ունի բավականին կենսափորձ ու

	կիրառելիություն մի շարք երկրներում: Քանի որ նախագծային աշխատանքը սովորողին տալիս է համալիր գիտելիք, նոր կարողունակություններ, գործնական հմտություններ, կարծում ենք՝ ճիշտ որոշում է նման ուսուցման համատարած ներդրումը ՀՀ կրթական համակարգում: Նախագծային ուսուցումը սովորողի համար այնքանով է հետաքրքիր, որ աշխատանքների իրականացնողը, նախագծողը, տեղեկատվության համակարգողը, վերլուծողը հենց ինքն է՝ սովորողը: Իսկ այսօրվա սովորողը, ինչպես գիտենք, շատ հաճախ է ուսուցչից պահանջում հենց նմանօրինակ դասեր անցկացնել, որտեղ ինքը կարող է գործնականում կիրառել տեսական գիտելիքների իր պաշարը: Նախագծային աշխատանքը սովորողին մղում է մտածելու, ստեղծելու, համեմատելու, զուգահեռներ

	անցկացնելու: Սովորողը աշխատանքի ընթացքում դառնում է հետազոտող, բացահայտող, նորարար, ուստի այս աշխատանքները գրավիչ ու հետաքրքիր կարող են լինեն սովորողի համար: Մեթոդի կիրառությունը բավականին արդյունավետ է նաև «գրականություն» առարկայի դասավանդման շրջանակներում: Այդպիսով, ուսուցանվող նյութը սովորողի համար դասոնում է ավելի պատկերավոր ու ընդգրկուն:
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ, կարողունակություններ, նոր դերեր, հմտություններ: Նախագծային մեթոդը կարող է սովորողին տալ այն, ինչ ինքն է ուզում՝ բավարարել սեփական հետաքրքրությունները, զարգացնել գործնական կարողություններ: Իսկ կրթական համակարգն այսպես լուծում է իր գերխնդիրը՝ կրթել ու դաստիարակել:

	Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսումնական գործընթացում կրթական առաջարկի ու պահանջարկի համընկմամբ՝ ի դեմս նախագծային մեթոդի գործադրմանը գրականության դասաժամին:
Ո՞ր առանցքային ենթակոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Սովորել սովորելու կարողունակություն
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	«Կարողունակությունների ձևավորմանն ուղղված դաս»

Պարագրաֆներ/մասեր **(10-15 էջ)**

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: Պարտադիր է կատարել հղում աղբյուրին	**«Հովհ. Թումանյան» թեմայի ուսուցումը 8-դ դասարանում նախագծային մեթոդաբանությամբ»** • Նախագծային ուսուցման հիմնական դրույթները Նախագծային ուսուցումը ուսուցման դիդակտիկ համակարգ է, իսկ նախագծային մեթոդն այդ համակարգի բաղադրիչ է, մանկավարժական տեխնոլոգիա, որը ներառում է ոչ միայն գիտելիքների ինտեգրումը, այլև գիտելիքների կիրառումը, նորերի ձեռքբերումը: Նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի և ուղղորդողի դերով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակը

սովորել սովորեցնել սովորողին՝ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է: Որպես նախագծային մեթոդի վերջնարդյունք՝ կարելի է համարել՝

- ճանաչողական հմտությունների զարգացում, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու հմտություններ,
- ՏՀՏ գործիքներ կիրառելու, տեղեկատվական հարթակներում կողմնորոշվելու կարողություն,
- քննադատական մտածողության ձևավորում,
- կոլեկտիվ մտածողության ձևավորում, թիմային աշխատանք,
- Աշխատանքի ընթացքում ինտեգրված գիտելիքների ձեռքբերում,
- սովորել սովորելու կարողունակության, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությոան ձևավորում:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուիի կողմից առաջ քաշած մանկավարժական հասկացությունները, ով դրանք գործնականում կիրառել է Չիկագոյի փորձարարական լաբորատոր դպրոցում 1896 – 1904 թվականներին: Ջ. Դյուին կարծում էր, որ դպրոցի բոլոր գործողությունները

պետք է ուղղված լինեն սովորողի մտածողության ձևավորմանը, որը հիմնված է անձնական փորձառության վրա: Ըստ Դյուիի՝ մեթոդը տալիս էր այնպիսի պայմաններ, որոնք հարմարեցված էին անհատական կարիքներին և կարողություններին, ինչպես նաև կարող էր ապահովել դիտարկման, ներկայացման, հետազոտության, գաղափարների մշտական զարգացման համար համապատասխան պայմաններ:

Նկատենք, որ նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ, ավելին՝ միջազգային կրթական առաջավոր համակարգերում մեթոդի արդյունավետությունն ու կառուցվածքը բավականաչափ ուսումնասիրված է:

Նախագծային ուսուցման գերխնդիրն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման ընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, գտնել դրանց կապը կենսագործունեության հետ և կիրառել:Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն

է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց հավաքագրում և կիրառելու պատրաստակամություն:

Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

- Ռեֆլեկտիվ հմտություններ
- Որոնողական, հետազոտական հմտություններ

- Համագործակցային հմտություններ, կառավարման կարողություններ, հմտություններ
- Շնորհանդեսների, ամփոփիչ տարաբնույթ աշխատանքների պատրաստման հմտություններ՝ այդ թվում ՏՀՏ գործիքների օգնությամբ
- Ներկայացման հմտություններ:

Նախագծային մեթոդի տարբերությունն այլ մեթոդներից այն է, որ հնարավորություն է տալիս սովորողների մոտ մեկ աշխատանքային գործունեության ընթացքում միանգամից զարգացնել համալիր կարողունակություններ: Այս աշխատանքը սովորողին տալիս է մի շարք առավելություններ, դրանք են՝

- սովորողի հետաքրքրությունների շրջանակի բացահայտում,
- սովորողի գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառություն, ինքնուրույնություն,
- ստեղծարար մտածելու և գործելու կարողություն, նախաձեռնողականություն
- արդյունքի ներկայացում, նախագծելու, համակարգելու, հարմարեցնելու, որոնելու կարողություն,
- ՏՀՏ կիրառելու կարողություն,
- կոլեկտիվ աշխատելու ունակություն:

Նախագծային գործունեության նախագծումը բավականին աշխատատար ընթացք է, ունի հստակ փուլեր, դրանք են՝

- Թեմայի կամ գործունեության ընտրություն
- Աշխատանքի ընթացքի պլանավորում
- Տեղեկատվական հոսքերի կառավարում, տեղեկատվության փոխանցում
- Գործընթացի կազմակերպում, գործընթացի իրականացում
- Արդյունքների ցուցադրություն

Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնահետազոտական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները: Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար: Ուսումնական նախագծերը սովորողների համար ունակ են նպաստավոր պայմաններ ստեղծել սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար, ինչը ենթադրում է ինքնանդրադարձ կատարելու կարողության ձևավորում

Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է. սովորողներն իրենց ուսուցչին դերային մոդել են համարում:

Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի

	յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը: Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ թիմային աշխատանքի ժամանակ սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց համագործակցում են: Անգամ թույլ սովորողներն այստեղ ստվերում չեն մնում, բոլորը նախագծում և ուսումնասիրում են համաչափ, բարձրանում է պատասխանատվության զգացումը, սեփական ներդրումն ունենալու ձգտումը: «Գրականություն» առարկայի շրջանակներում ևս կարելի է մշակել հետաքրքիր նախագծեր: Մեծ գրողների կյանքի և ստեղծագործական ժառանգության ուսումնասիրություն, նրանց սերունդների ու ժառանգների հետ հանդիպումներ, այցելություններ թանգարաններ, սրանք համալիր գործողություններ են, որոնք, մեկ նախագծի մեջ համագարգելով, սովորողներն ավելի խորքային կարող են հասկանալ ուսումնական նյութը, որն առավել քան առարկայական ու տեսանելի կդառնա վերջիններիս համար: Այսպիսով, աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, պատրաստվում նախագծի պաշտպանությանը: Պաշտպանությունը աշխատանքի վերջնական արդյունքն է, որը կարող է լինել ցանկացած բնույթի՝ կախված սովորողների ստեղծագործական մոտեցումներից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծային ուսուցումն ուղղված է

	սովորողների կարողականությունների ձևավորմանը՝ ուստի առաջնահերթություն է տրվում գնահատման ձևավորող համակարգի օգտագործմանը: Աշխատանքի ավարտին սովորողները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը:
	1.2«Հովի. Թումանյան» թեմայի կրթադաստիարակչական նշանակությունը միջին դպրոցում Ուսուցիչը դասապրոցեսի ընթացքում հնարավորություն ունի առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով սովորողների մեջ սերմանել բաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում սովորողների գիտելիքների ձեռքբերման, հմտությունների ու կարողությունների ձևավորման, դաստիարակչական խնդիրների լուծումը: «Գրականություն» ուսումնական առարկայի դասաժամը նույնպես լավ հնարավորություններ է տալիս ուսուցչին

դրական ու արժեքավոր սերմեր տալ սովորողին: Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է փորձի համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորի ստեղծագործական ու քննադատական մտածողություն, գեղարվեստական գրականությունից վերցված կյանքի այլևայլ իրավիճակների օգնությամբ սովորողների համար ստեղծի այնպիսի իրավիճակներ, որոնցում վերջինս ստիպված է մտածել, որոնել, փնտրել, դասդասել, հատկանշավորել, կարծիք ու դիրքորոշում հայտնել: Նման հնարավորություն կարող է ստեղծել նախագծային ուսուցումը, որի շրջանակներում պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում օգտագործելու կարողություն: Նախագծային ուսուցումը կարելի է դիտարկել որպես կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության տեսակ: Կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթությունն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Կարևոր է սովորողներին ծանոթացնել աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելուն, գրական կերպարների օգնությամբ վերջիններիս մոտ ձևավորել բարձր քաղաքացիականության պատկերացումներ, ցույց տալ անձի բարոյական հիմքերի առաջնահերթությունը, ամրապնդել սովորողների հայրենասիրական, գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը, զարգացնել հուզական արժեքային մտածողություն: Այս ամենին հասնելու ճանապարհին ուսուցչին օգնության է գալիս մեծն բանաստեղծ Թումանյանը:

Հանրակրթական դպրոցի միջին օղակի 8-րդ դասարանի ծրագրով սովորողները ավելի խորքային են ուսումնասիրում Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունները: Մեծն Թումանյան լինքն էր օժտված մեծագույն մարդկային, բարոյական, հումանիստական, ազգասիրական արժեքներով, և անհնար է այս արժեքները չնկատել իր իսկ ստեղծագործություններում: Թումանյանի գրական անգին ժառանգության մեջ առանցքային տեղ են գրավում դպրոցին, ուսուցչին և մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վերաբերող հարցերը, որոնց մեջ բարձրացված գաղափարներն այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը: Թումանյանի համար աներկբա էր, որ կրթության ու դաստիարակության գործում վճռական դեր է կատարում ուսուցչի դրական օրինակը, ուստի ամենից առաջ ինքը մանկավարժը պետք է օժտված լինի մարդկային արժանապատվությամբ , ունենար խոր ու հաստատուն գիտելիքներ: «Ուսուցիչը դպրոցին հոգի ներշնչողն է, նրա պատիվը, նրա փառքը»,- ասում է Թումանյանը:

Իզուր չէ ասված, որ թումանյանական խոսքը տարիք չի ճանաչում. արդեն միջին դպրոցում ավելի խորքային ուսումնասիրելով մեծն բանաստեղծի գրական ժառանգությունը՝ սովորողներն արդեն ուրիշ աչքերով են նայում բանաստեղծի գաղափարներին, ավելի հասուն ու խորքային են ընկալում ու հասկանում գրողի կոչերը, հորդորներն ու կյանքի դասերը:

Ամեն մի ստեղծագործություն ունակ է մի նոր արժեք, մի կարևոր դաս տալ սովորողին, ստիպել վերանայել սեփական վարքը, սկզբունքներն ու համոզմունքները

«Հայրենիքիս հետ» բանաստեղծության ուսումնասիրությունը 8-րդ դասարանցուն պետք է տա հայրենասիրության մեծագույն չափաբաժին, նա պետք է տեսնի թումանյանական ազատասիրական ոգու ուժը, պետք է գիտակցի, որ գլուխը կախ չի կարելի ապրել, պետք է պայքարել հայրենիքի ազատության, բարգավաճման համար: Հատկանշական է, որ բանաստեղծությունը Թումանյանը գրել է Մեծ եղեռնի օրերին. նրա յուրաքանչյուր տունը մեր պատմության մի պատառիկն է:

Առաջին 2 քառատողերում «Զարկված ու զրկված, ողբի ու որբի հայրենիքի» պատկերներն են, իսկ երրորդը և չորրորդն ավարտվում են «Լույսի և հույսի, նոր ու հզոր հայրենիք» արտահայտություններով:

Կարծում ենք՝ հեղինակը բանաստեղծությամբ սերունդներին ուզում է ասել, որ հայն իրավունքն չունի պարտվելու, գլուխը կախ մորթվելու:

Թումանյանը իր հրապարակախոսական երկերում քննադատել է տգիտությունը, խավարամտությունը, բարձր գնահատել կրթությունն ու արժանապատիվ ուսուցիչներին:

Այս ամենին գեղարվեստական ձև տալով՝ ստեղծվել են նրա բազմաթիվ հեքիաթները, պոեմներն ու բանաստեղծությունները, որտեղ կարմիր գծով դատապարտվել են մարդկային արատները, կաղապարված ու ազգային արժեքների ու ավանդույթների տակ քողարկված ադաթները, մարդկային հիմարությունը, տգիտությունը, սուտը, դավաճանությունն ու խարդախությունը:

«Թմկաբերդի առում» պոեմը ոչ միայն սովորողին ցույց է տալիս դավաճանության խարանը, այլև նպատակ ունի բացահայտել մարդկային ազնվության, հավատարմության, սիրո, ընտանիքի, հայրենիքի վեհությունը: Թշնամու խարդախության ու կնոջ դավաճանության օրինակով Թումանյանը բնավ էլ նպատակ չունի վատ օրինակը շեշտադրել, այլ այստեղ նրա հիմնական նպատակն է ցույց տալ անպարտելի Թաթուլ իշխանի ուժը, նրա կամային ու հայրենասիրական բարձր որակները: Հենց սա է, որ ուսուցիչը պետք է սերմանի իր սովորողի մեջ, վատ օրինակի շեշտադրմամբ ցույց տա մարդկային վեհ արժեքների կարևորությունը՝ դրանք արմատավորելով սովորողի արժեհամակարգի մեջ ու դնելով վերջինիս բարոյական դաստիարակության հենքում: Ուսուցիչը պետք է սովորողին չպարտադրի կարծիք կամ դիրքորոշում: Բնագրի ընթերցումից հետո սովորողն ինքը պետք է հնարավորություն ունենա տեսնել Թաթուլի ուժը, Նադիր շահի խորամանկությունն ու հենգությունը և թմկա տիրուհի անմտությունն ու հիմարությունը:

Այստեղ կարևոր է աշակերտակենտրոն մոտեցումը: Վենների դիագրամի, երկայուն կամ եռայուն աղյուսակների միջոցով

սովորողները կարող են հատկանշավորել հերոսներին, գտնել դրական ու բացասական հատկանիշները, դերախաղի միջոցով հարցեր ուղղեն գլխավոր կերպարներին: Արդյունքում՝ ուսուցիչը, ուսումնական նյութի ուսուցմանը զուգահեռ, սովորողների մեջ դաստիարակում է բարոյական բարձր արժեքներ:

Դիմելով երեխաներին՝ ասում է. «Դուք պետք է ճանաչեք ձեզ. իրեն ճանաչելը ամենամեծ հաղթանակն է: Պետք է մեծամտել. երեխայի ամենամեծ թշնամին մեծամտությունն է հերքին կարողության»: Թումանյանին կամքի ուժ տվող կարևոր հոգեբանական-մանկավարժական գործոններից մեկը լավատեսությունն էր: Նրա ստեղծագործությունները սովորողներին ուժ և կամք են տալիս, նրա հերոսներն ուղղորդում են, սովորեցնում, զգուշացնում, մատնացույց անում արատներն ու կյանքի վատ կողմերը: Մեծ բանաստեղծի արարչագործության ակունքները ժողովրդական բանահյուսության մեջ են, այստեղից է նաև հարուստ բառապաշարը, առածների ու ասացվածքների, առակների ու ավանդությունների զարմանահրաշ իմացությունը:

Ծնվելով Լոռվա բնաշխարհում, ապրելով մեծ նահապետական ընտանիքում՝ Թումանյանը սնվել է մարդկային բարձր արժեքներով, մաքրամաքուր բնության ու առաքինի մոր՝ Սոնայի տված բանահյուսական գոհարներով, հայ ժողովրդի բառ ու բանով, երգ ու զրույցով: 8-րդ դասարանում ծրագրով նախատեսված հաջորդ ուսումնականն նյութը «Փարվանա» բալլադի ուսումնասիրությունն է: Բալլադի հիմքը վերցված է ժողովրդական բանահյուսությունից: Այուժեն Թումանյանը լսել է Ներսիսյան դպրոցում, իր ընկեր, հետագայում՝ մանկավարժ

և լեզվաբան Գրիգոր Վանցյանից: Բալլադը գրվել է 1902 թվականին, Աբասթումանում: Հովհաննես Թումանյանը «Փարվանա» բալլադի մեջ ցույց է տվել, թե ինչ կարող է պատահել ազահ մարդկանց հետ: Այստեղ ազահության զոհ է դառնում արքայի դատարկամիտ դուստրը, նրա չափից դուրս անիրականալի ցանկության պատճառով: Այսպիսով, պախարակելով ագահությունը, Թումանյանն իր կոչն է հղում ընթերցողին՝ օրինակնով ամրապնդելով իր գաղափարը: Ուսուցչի խնդիր այս պարագայում էլ նույնն է. հեղինակի խոսքը հասցնել սովորողին՝ թույլ տալով, որ վերջինս ինքնուրույն եզրահանգումներ կատարի, գտնի ստեղծագործության լավ ու վատ կողմերը:

Միջին դպրոցում Թումանյանի ստեղծագործությունների ուսումնասիրությունը եզրափակում են քառյակները: Թումանյանի քառյանկները, չնայած իրենց փոքր ծավալին, նույնպես մեծապես կարող են նպաստել սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա: Թումանյանը գեղարվեստական այս ժանրի մասին ասել է. «Քառյակը պոեզիայի մինիատյուրն է, նուրբ ճաշակի բան: Քառյակները պետք է կարդալ հանգիստ ու ծանր և ամեն մարդ չի կարող հասկանալ, գնահատել: Մարդիկ կան, որ քառյակները ոտանավորի նման են կարդում. պարզ տեսնում ես, որ չի հասկանում թե ինչ բան է քառյակը»:

Ինչքա՜ն ցավ եմ տեսել ես,
ՆենգՈ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,
Վատը՝ լավ եմ տեսել ես:

Ահա այս չորս քառատողում Թումանյանը դրել է

	փիլիսոփայական մեծ գաղափար: Թումանյանը, խոսելով ցավի ու տառապանքի մասին, ի վերջո ցույց է տալիս իր հոգու լավատեսությունը, լավը, բարին տեսնելու հույսն ու կարողությունը: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հասարակության կորիզը գիտելիքներով զինված, արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական բաղադրիչն է: Կարծում ենք՝ ուսումնադաստիարակչական գործընթացը գործի է դնում իր ողջ մարդկային ներուժը՝հմուտ ուսուցիչներին, որ ՀՀ յուրաքանչյուր բաղադրիչն լինի հենց այդպիսին: Իսկ այդ բարդագույն խնդրի լուծման ճանապարհին Թումանյանի խոսքն ու գաղափարները իսկական օգնություն են ուսուցչին , քանի որ իրենց մեջ ունեն վեհ գաղափարների գովերգում, վատի ու արատավորի դատապարտում: **1.3** Նախագծային աշխատանք՝ **«Հովհ. Թումանյան»** թեմայի ուսուցման շրջանակներում ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԹԵՄԱ՝ **«Ամենայն հայոց բանաստեղծը»** ԱՌԱՐԿԱ՝ **«Գրականություն»** ԴԱՍԱՐԱԲ՝ **8-**րդ Ուսուցիչը կատարում է աշխատանքի բաժանում՝ դասարանը բաժանելով 3 խմբի: ԽՈՒՄԲ**-1**

Այս խմբում ընդգրկված սովորողները այցելում են գրադարան, ծանոթանում Թումանյանի մասին մի շարք կենսագրական մանրամասների, ընթերցում նամակներ, հոդվածներ, մեծերի կարծիքը բանաստեղծի մասին, հուշեր: Ուսումնասիրված նյութը հավաքում, համակարգում են՝կազմելով հետազոտական աշխատանք:

ԽՈԻՄԲ-2

Սովորողները, կիրառելով ՏՀՏ գործիքներ, ստեղծում են տեսասահիկ և տեսահոլովակ Թումանյանի մասին՝ հիմք ընդունելով առաջին խմբի կատարած հետազոտական աշխատանքը:

ԽՈԻՄԲ-3

Այս խմբի սովորողներն էլ բեմադրում են «Թմկաբերդի առումը» պոեմը՝ բեմադրության վերջում ներկայացնելով սեփական կարծիքները:

Նախագծային աշխատանքի ամփոփման ժամանակ սովորողները միասին քննարկում են աշխատանքը և որոշում, որ նախագծի ներկայացումը հարկավոր է իրականացնել Դսեղ գյուղում: Ճանաչողական էքսկուրսիայի շրջանակներում բանաստեղծի տուն-թանգարանի բակում սովորողները ներկայացնում են իրենց բազմաբաղադրիչ նախագծային աշխատանքը:

Ստացվեց, որ սովորողն ինքը դարձավ հետազոտող, փնտրեց, գտավ, համակարգեց՝ արդյունքում հավաքելով գիտելիքների ու կարողունակությունների մեծ պաշար: Ընդհանուր աշխատանքային միջավայրի արդյունքում որևէ սովորող ուղղակիորեն չի կարող պասիվ դերում լինել, քանի որ ինքն է իր գիտելիքը հավաքում, այստեղ ուսուցչի միջամտությունը բացակայում է: Աշխատանքի ընթացքում սովորողներն էլ ավելի

	մտերմացան, քանի որ բոլորով աշխատում էին մեկ նպատակի շուրջ:
Օգտագործված մեթոդները, գործիքները	• Համեմատական մեթոդ • Վերլուծական մեթոդ
Իրականացման ժամանակահատվածը	1 ամիս 20.08- 20.09
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	8-րդ դասարանի սովորողներ 12 տղա 18 աղջիկ

Եզրակացություններ, առաջարկություններ **(1-2** էջ**)**

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխանհետազոտական հարցին	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հետազոտության թեմայի շրջանակներում կատարված եզրահանգումներն են՝ • Գրականության ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի, որևէ կերպ չպետք է պարտադրել

սովորողին սեփական կարծիքը, հարկավոր է ամեն կերպ խթանել վերջինիս ինքնուրույնությունն ու քննադատական մտածողությունը:

- Հարկավոր է Գեղարվեստական գրականության մեջ առկա դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավորել:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, որոնց թվում նախագծային ուսուցման մեթոդը:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսումնառության գործընթացի վերջնարդյունքը կառուցի կարողունակությունների ձևավորման վրա:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գործընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք:
- Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:

	Առաջարկում ենք, որ առանձնակի ուշադրություն դարձվի թումանյանական գրական ժառանգության ուսումնասիրությանը: Կարծում ենք, որ հանրակրթական դպրոցում սովորողը պետք է ճանաչի ոչ միայն Թումանյան գրողին, այլ պետք է ծրագրում, որպես ուսումնաօժանդակ նյութ, ներառել նաև վերջինիս հրապարակախոսությունները, հոդվածները, նամակներն ու հուշերը: Թումանյանին պետք է ճանաչել, տեսնել: Բանաստեղծի կյանքի ու գործունեության մասին զանազան տեսաֆիլմերի դիտումը, այցելությունները նրա տուն- թանգարաններ, միջոցառումների ու գրական երեկոների կազմակերպումը սովորողներին կտա հնարավորություն ավելի խորքային ուսումնասիրել մեծն մտածողի գաղափարները, որոնք սերունդներ են կրթել ու, վստահաբար, դեռ հարատևելու են, ինչպես ինքը՝ Թումանյանը: Իսկ նախագծային ուսուցումն այս համատեքստում ունի կարևոր ու անփոխարինելի նշանակություն համալիր գիտելիքների ու կարողունակությունների ձևավորման տեսանկյունից:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

- http://boon.am/learning/ Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին):
- https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
- ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- https://www.grakantert.am/archives/12211 Թումանյանի ասույթները, Գրական թերթ, 15. 02. 2019:
- https://hasmiktagvoryan.wordpress.com/2014/02/20/ Թումանյանը՝ քառյակների մասին:
- https://fliphtml5.com/fumf/uybc Հայ գրականության 8-րդ դասարանի դասագիրք, էջ 163:
- Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013.

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր	http://www.toumanian.am/

• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) • Նկարներ • Արդյունքներ	